ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-2-ԵՊԲՀ»

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար սրտի կորոնար անոթների ստենտավորման ժամանակ օգտագործվող բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2018 թվականի նոյեմբերի 26-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2018 թվականի նոյեմբերի 27-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1: Խնդրում ենք պարզաբանել գնման առարկայի մեջ մտնող 3 և 4 չափաբաժինների վերաբերյալ համարժեք կդիտարկվի արդյոք Medtronic ֆիրմայի արտադրության Resolute Onyx և Resolute Integrity ապրանքատեսակները 8,12,15,18,22,26,30,34,38 երկարությամբ և 2.0,2.25,2.50,2.75,3.0,3.5,4.0,4.5,5.0մմ տրամագծով դեղապատ ստենդը, որը ֆունկցիոնալ առումով հնարավորություն է տալիս հասնել այն արդյունքին, որին հնարավոր է հասնել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերը ունեցող ապրանքատեսակի կիրառման դեպքում:

Պարզաբանում N 1: Ի պատասխան ստացված հարցման պարզաբանում ենք հետևյալը. Medtronic ֆիրմայի արտադրության Resolute Onyx և Resolute Integrity ապրանքատեսակների համարժեքության մասին գնահատականը տրվում է հայտերի գնահատման փուլում ամբողջական բնութագրին ծանոթանալուց հետո, որը Ձեր կողմից ներկայացված չէ: Ինչ վերաբերվում է պահանջվող ստենտի հրավերով սահմանված չափերին, հայտնում ենք Ձեզ, որ Ձեր կողմից ներկայացված չափերը, մասնավորապես երկարությունը՝ 8, 12, 15, 18, 22, 26, 30, 34, 38 մմ և տրամագիծը՝ 2,0, 2,25, 2,50, 2,75, 3,0, 3,5, 4,0, 4,5, 5,0 մմ ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժիններով պահանջվող ապրանքատեսակների չափերի հետ համարժեք են:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տատյանա Միրզոյանին:

Հեռախոս՝ 060 651 471

Էլ. փոստ՝ procurement.ysmu2@gmail.com

«ԷԱՃԱՊՁԲ-2019/16-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

Նախագահ՝ _____ Լ.Դանիելյան

Անդամներ՝ _____ Է.Միրոյան

_____ Կ.Մկրտչյան